Մեղրաշատ

Վարչական ղեկավար՝ Սաղաթելյան Վահրամ

Հեռ 093-05-50-20

Մակերես՝ 11.5կմ^2

Բնակչություն՝ 367

meghrashat.shirak@mta.gov.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ **ՄԵՂՐԱՇԱՏ** ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի ներկայիս անվանումը –ՄԵՂՐԱՇԱՏ
Համայնքի պատմական անվանումները- ՂԱՐԱՄԱՄԱՏ
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – 1812 թվական
Որ համայնքներին է սահմանակից համայնքը –Թուրքիայի Հանրապետություն, Ողջի, Բյուրակն
Համայնքի մակերեսը – 1147 հա
Հեռավորությունը մայրաքաղաքից-140 կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից -20կմ
Բնակչության թիվը – 568մարդ
Կրթական հաստատություններ – միջնակարգ նորակառույց դպրոց
Մշակութային հաստատություններ –համայնքային կենտրոն
Արտադրական ձեռնարկություններ – քարի մշակման
Բնակչության հիմնական զբաղմունքը – հողագործություն, անասնապահություն , մեղվաբուծություն
Հոգևոր կառույցներ – վթարային եկեղեցի/ 1901թվականի կառույց/
Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, Ամասիա գյուղից 14կմ հարավ-
արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է14կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գարամահմա
տ, Գարամահմեդ, Կարամահմեդ,Կարամամմեդ, Ղարամահմադ, Ղարամամեդ անվանումները: Մեղրա
շատ է վերանվանվել 1946 թ-ին:
Գյուղըտեղադրված է Ախուրիկ գետի վերին հոսանքում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակի
ց1750մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատունձնածա
ծկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է,համ
եմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-
600մմ: Բնական լանդշաֆտները սևահողայինլեռնատափաստաններ են:
Գյուղի շրջակայքում պահպանվել են 1868 թ-ի կառուցված փայտաշեն եկեղեցի, իսկ դեպի հյուսիս-
արևելքգտնվում է Մամուծան գյուղատեղին: